



ՀԱՅԲԱԹԱԹԵՐԹ

ԱՐՁԱՐԱՐՈՒՄ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 67

ՀՈԿՏԵՄԲԵՐ 20/2 ՆՈՅԵՄԲԵՐ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԾԱՐԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի † Հոկտ. 20/2 Նոյեմ. † Թիւ 67

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

1707 ՏԱՐԻՈՅ Կ. ՊՈԼՍՈՅ ԲԱՐՄԱԳ ԳԱՐՈՒԻ ՄԷՉ ԿԱՏԱՐՄԱՄ

ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՓԱՌԱԻՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

1707 տարւոյ Հոկտեմբեր 25ը, կռապաշտութենէ ծագում առած և մօժ Լուսաւորչի մը ձեռօք Քրիստոնէութեան դառնալով, ապա զամ քան զգամ հերետիկսութեան և անտարբերութեան ուղւոյն մէջ հսկայ քայլերով յառաջադիմող ազգի մը ներկայացուցիչ եկեղեցական դասակարգին և Աւագորերոյն բուն ռիսակալութեան, անհաշտ ատելութեան զազանային անգթութեան, իսկ Օսմանեան արեգերահռչակ պետութեան ազէտն եղած և հակառակ օրինաց՝ արդարութիւնը ծախող անխիղճ և կաշառամոլ և անուս անձնաւորութիւններէն զոմանս պարունակող

անիրաւ գաւառացի մը դժուարին մահալճոցն յաղթանակ տարած նշա-
նաւոր օրն էր :

Նոյն Հոկտեմբեր 25ը , Կաթողիկէ կրօնի փայլուն պարծանք եւ
կեղեցական եւ կրօնական պարտաճանաչութեան տիպար հանդիսացող ,
Մամոնայի , Բէլիարայ , եւ կրից զերիները խայտառակող , արհամարուած
ճշմարտութեան դատը պաշտպանող վեհ ու վսեմ ոգւոյ մը արիարար
նահատակութեան անմուաց օրն էր :

Վերոյիշեալ օրը երկնից կամարը ամպամած էր , արդէն նոյն տար-
ւոյ գարունէն սկսեալ Պոլսոյ հողը բնաւ անձրեւի կաթիլ չէր վայելած ,
հակառակ անոր որ երկինքը ստէպ ամպամած կ'երեւէր , եւ մերթ ընդ
մերթ սեւ ամպերը սպառնալիքներ բնկով կ'երթեւեկէին , այլ ի վեր ,
ամպերը միշտ ամուլ էին եւ բնակչաց սիրտը լի թախծութեամբ , կա-
թիլ մը անձրեւի կը հառաչէին , վասն զի հողը երաշտութենէ այրած
տոչորած էր . արմալք , պտուղք , բերք , ամենայն ինչ ոչնչացած . իս-
կական սովի ձեւ առած էր : «Աստուծոյ մեծ պատժն եւ այլ երաժուքիւ-
նը» կ'ըսէին մարմոքելով բնակչութեան մէկ մասը . ուրիշները ուրիշ
մեկնութիւններ կուտային : Հասած էր Հոկտեմբեր 25ը , երկինքը
մթաքնեալ եւ զայրացած էր սպառնալից թզվայոյրդ ամպեր դէպ ի դէպ
կուտակուած էին երկնից կամարին վրայ . կարծես ահա որ ազէտ մը կը
պատրաստէին , եւ կամ հանդերձեալ էին հուր եւ ծծումբ տեղացնել Պոլ-
սոյ վրայ : Տարբեր էր սակայն տեսարանը :

Մահմետական , Յոյն , Հայ , Լատին , Հրեայ կարգ մը հետաքրքիր
մարդիկ այլեւայլ նպատակներով վազն ի վազ փութացած էին առաւօ-
տէն կանուխ առաջին կարգերը բռնելու ի Բարմազ Գարու , ականատես
վկայ ըլլալու , եւ կամ մօտէն ըմբռնելու այն առուր երեւելի տեսա-
րանը : Հոն ներկայ էին նաեւ մի քանի անձինք , որոնք Հայ Կաթո-
ղիկէ հասարակութեան պատկանելով , բոլորովին սարսափահար ահ ու
զոզի մէջ տատ եւ անդ բաղմութեան մէջ ճշմարտելու անտիճան ծաւ-
ծուկ վայրեր ուղարտանաւ էին :

Պատմութիւնը մեզի կ'ըսէ թէ Բարմազ Գարու կոչուած վայրը
բնութեամբ հրապարակ մը կար , որ մահապարաներու զլխաման յատ-
կացուած էր , եւ այս հրապարակը Պոլսոյ Սուլթան Պալատի հոյակապ
մզկիթին եւ մեզի ծանօթ պատերազմական նախարարութեան կամ Սէ-
րասքէր Գարուսը կոչուած հռչակաւոր շէնքին մօտին էր ուր ներկա-
յապէս ու նմանօրինակ ահուկի տեսարաններ կը պարզուին երբեմն ,
իբրեւ թէ այն վայրը , արարչագործութենէ այսպիսի նորատակի մը հա-
մար սահմանուած ըլլար : Վերոյիշեալ հրապարակը զրեթէ կէս ժամու
չափ հոռի էր Արքայադրնակ Թօփգարու պալատէն որոյ մօտն է Ալայ
Քէօշք ըսուած տեղը եւ Եպարքոսարանը (այն ատենուան Պապը Ալին) ,
ուր կանոնական դատաւարութիւնը վերջանալէ յետոյ , ի ներկայութեան

Եպարքոսի «Քերվան» (մահավճիռը) կը կարգացուէր, ապա գլխատման գործողութիւնը կատարելու համար մահապարտը հետիոտն կ'առաջնորդուէր կամ Ալայ քէօշքի առջեւ և կամ Բարմազ Գարուի հրապարակը:

Ուստի այս հրապարակը, երկուեւ հոծ բազմութեամբ լեցուած էր, և այն օրը որ ինչպէս ըսինք, Հոկտեմբեր ամսոյ 25ն էր, այն տարին Շաքաթ աւուր կը հանդիպէր: Անօթի, ծարաւ, ամէնուն աչքը որոշ ճամբու ելքի մը յառած էր. վայրկեանները կը սահէին, տեսարանի վարագոյրը չէր բացուէր: Ոմանց դէմքին վրայ խորհրդաւոր ժպիտ մը գրուած կը տեսնուէր, խառն էր սակայն ներքին վշտէ և թախիծէ ցոլացումով. այլք անմուռնչ, և նշանացի կը խօսէին, կէսք անտարբեր դիրք մը ունէին, ոմանք կը խայտային, իսկ մեծագոյն մասը աչքերնուն բիւրբը սեւ ամպերուն յարած երկինքէն բան մը կը հայցէին, գթութիւն էր, հաշտութիւն էր, խաղաղութիւն էր, արդարութիւն էր՝ չգիտեմ: Սա ստոյգ էր սակայն թէ հանրութեան իզձն էր վայրկեան մը առաջ ազատել այն սգոյ արիւն հոտով վայրէն, որուն կարծես հողէն, մթնոլորտէն արիւնախառն գոլորշի կը բարձրանար բոլոր ներկաները իր մէջ պարծերով:


Եւ ահա արագաքայլ ոտից բամբիւններ կը լսուին: Տառնէն մինչեւ տառնեւհինգ տարեկան բոլորիկ ստքերով վազվազոյ ստորին դասակարգի աւետարներ տղոց խումբ մըն էր որ ինչպէս Պալոյ մէջ ամէնուրեք կը տեսնուի, իբրեւ յառաջապահք խառն ի խուռն կը յառաջանային: Այս տեսիլը ներկայ բազմութեան չիրաւ ցնցեց և հարկւրաւոր դէպի այն կողմ յարեցան: Յառաջապահ տղոց կը հետեւէին ցլը ու ցան կարգ մը ոտորկաններ յաջ ու յահակ կարգապահութեան հրամաններ արձակելով. առնց կը հետեւէին երեք կաշնաւորք ձեռքերնին չըլթաներով ետեւէն կաշկանդուած. աչուքնին դեպին սեւեռած, յամբաքայլ և այլալլած դէմքերով, առանց ո և է կողմ դիտելու կամ փախուստի հնարք հայթայթելու: Առնյովէ անմըջապէս ետքը նշանաւոր քաշիճ և դահճապետ և պահպանութեան համար որոշուած կարգ մը ևս ոտորկան զինուորներ, և ետեւէն շատ մը խառն դէմքեր որոնք իբրեւ վերջապահ պաշտօնեաներ յամառութեամբ յուղարկաւորութեան թափօրին կը հետեւէին:

Յանկարծ հրամայողական շեշտով արտասանուած ձայն մը լսուեցաւ «այլը՛ն, յեֆիլե՛ն» ճամբայ տուէք, մեկդի քաշուեցէք, և ահա եղերերգութեան վերջին վարագոյրը բացուած էր: Հրապարակին միավայրը առանձնացած սակաւին ոտքի վրայ կը կենային ի սպանդ վարեալ երեք ոչխարներն, մօտերնին զանազան զինուորներ, դահիճը և քիչ հեռի դահճապետը: Վայրկեան մը մէջերնին խօսքի փոխանակութիւն դարձաւ, ապա մին ի կաշնաւորաց յառաջ մղեցաւ, և երկու ինկերները քանի մը քայլ հեռի մնացին: Այն որ առաջինը պիտի լլկար

գլխատուելու, որովհետեւ երկու ձեռքերը ետեւէն չդ'աշխարհով կապուած էին, գլխովը իր անձը խաչակնքեց և աջ սուրբով խաչի նշան մը քրաւ գետինը, և վրան ծնրադրեց երեսը դէպ յարեւելս դարձնելով: Դէմքը նիմա անայլալ էր, լուրջ և հաստատուն դիմագիծ մը ցոյց կուտար, և չըթանց թեթեւակի շարժումներէն՝ զինք դիտողներ կ'իմանային թէ Բարձրելոյն առջեւ գերբնական ուժով սողորուած լռելեայն կ'ազօթէր, և փայտի դէզին վրայ նստուած Խաչակի պէս ողջակէզ մատուցուելու կը պատրաստուէր: Վրան հաղած սեւ կապայէն ալեխառն մօրուքէն, գլուխը դրած գմբեթաձեւ խոյրէն կրնշմարուէր եկեղեցական մ'ըլլալը. դէմքէն, մանաւանդ վառվառուն աչուրներէն կ'իմացուէր թէ շուրջ 50 տարեկան, գիտուն, արթուն, առաքինազարդ, պարտաճանաչ, համեստ և հաստատամիտ եկեղեցական մըն էր: Ազաղակները պահ մը դադարած էին, և խոր լռութիւն մը կը տիրէր այն ընդարձակ նրապարտկը լեցնող բազմութեան մէջ և ահա դա՛իծը որ մահապարտին մօտը կեցած՝ սուր ի ձեռին կը դիպէր իւր զո՛ւր, ծռեցաւ սակաւիկ մը դէպ ի ան՝ ու մի քանի խօսք արտասանեց, և պատառ խանը առաւ, կ'երեւար թէ զոհին բռնած գիրքին վրայ էր խօսքը, և սակայն նա անշարժ մնաց այն կողմը ուր դարձած էր, և դա՛իծին երկրորդ ազգին վրայ գլուխը դէպ առաջ խոնարհեցուց, և երբ ահաւոր սուրբ ոգի մէջ բարձրացած էր ուժգին հարուածը տալու, վազեց դահճապետը յողթանակով մը և դատապարտեալին ականջն ի վար քանի մը խօսք գրուցեց. տարակոյս չկար որ անընդունելի առաջարկ մըն էր, որուն ժխտական պատասխան առաւ գլուխը երերցնելով և չըթուքները շարժելով: Յստակ կերպով կը լսուէր այն ամէնը մօտ գտնուողներէն, Այդ վերջին միջադէպէն անմիջապէս ետքը, դա՛իծին անիմայ ձեռքին մէջ յօգն բարձրացած պողովատիկին փայլատակիլը, վար իջնալը և գլխուն իրանէն բաժնուելը, գետին իյնալով երկցս շարժիլը մէկ եղաւ: Գետին տապալեցաւ նաեւ իրանը երերալով, և կենդանի վարդապետին արիւնը փրփրալով, խփոջելով լճացուց գետինը և եռացող արեանը գոլորշին «իհժ» պոռալով վեր բարձրացաւ: Այդ զոհը, այդ ողջակէզը Սամաթիոյ Սուլու Մանասթրը կոչուած Ս. Գէորգ եկեղեցւոյն Աւագերէցը՝ Տէր Կոմրտաս Բահանայ Քէօմիւրճեանցն էր, որ Ուղղափառ Ս. Եկեղեցին դաւանած ըլլալուն համար, Էջմիածնական եկեղեցականաց դաւսին սատանայական վրէժինդրութեան թելադրութեամբ մատնուած, սուրբ հաւատքը պոչտպանելով արիարար կը նահատակուէր:

Հողիւ թէ Տէր Կոմրտասը նահատակուեցաւ և սկսաւ սուրբ արիւնը առատօրէն հոսել, ներկաներն ահով և սարսափով պաշարուեցան, այն բազմութիւնը պահ մը անշարժ մնաց յափշտակուած այն տեսիլէն, և հոն ներկայ եղող շատ մը հայեր, Յոյներ. Լատիններ իրենց մօքուր վարչամակ և թաշկինակները այն սուրբ արեան թաթիւելով՝ պահեցին

իւրեւ զանձ թանկագին , և ոմանք զրամով դարձնէն գնեցին քաջ նա-
նատակն սրբազան զգեստները , և կուրծքերնին զարնելով ցրուեցան :
(Շարունակելի)



ՕՐՄԱՆԵԱՆԻ „ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ” ԳԻՐՔԸ¹

Բ.

(Շար).

Հայ Եկեղեցւոյ դաւանական վիճակը իր տեսութեան համաձայն
չօչափելէ վերջ՝ կ'անցնի յառաջաբանողը անոր կազմակերպութեան
սկզբունքներուն , որոնց գէժ կը դնէ Հեղինակին մէկ խորհրդածութիւնը .
«Արեւելեան» եկեղեցիներու դերը , կ'ըսէ , իր պահպանութեան նախաւիճակն .
նեղիմախիւ կողմէ մեկ լատով մը յացասրում է , երբ կ'ըսէ . թէ նախնա-
կան եկեղեցիներ ազգութեանց համաձայն կազմուեցան» (էջ 11) . Մենք
այդ բացատրութեան մէջ յայտնի հակասութիւն մը կը գտնենք
նախնական եկեղեցեաց կազմութեան մասին Առաքելական թղթերէ և
Հայրերէ աւանդուած ծանօթութեանց . ինչպէս պիտի տեսնենք . Ա-
ռաքելները նոյն իսկ «խրափանչիւր ազգութեան իւր յեզուով Աւետարանը
խորոզելու» հարկին մէջ գտնուելով և առ այդ Հոգւով սրբով լեզուա-
գիտութեան ուսուցիչ ընդունած ըլլալով հանդերձ հաւատք ու անոր
վրայ շինուած Եկեղեցին գիտցած են յացառել ազգութիւններէ և ա-
նոնց զանազանութիւններէն վերացնող սկզբունքի մէջ զեանդել , ուր
կը դադրի ամէն խորութիւն տիրելով և մնալով միայն համերային մի-
ութիւն ի Յիսուս Քրիստոս : Եկեղեցին ի տիրուած Հեթանոսաց չէր խա-
րէր հրեայն ու հեթանոսը , Հռովմայեցին ու բարբարոսն , խուժն ու
զուժը և միայն հաւատքը ամէնուն հաւատքն է , որովհետեւ ամէնքն
ալ նոյն բանը կը խորհէին ու կը դաւանէին և ամէնքն նոյն շէնքի քա-
րերն էին , նոյն մարմնոյ անդամներն , մնալով մէկտեղ լեզուաց ու ա-
րեւակցութեան տարբերութիւններն : Միութիւնն էր ուրեմն որ յեղ-
հանրացած էր և այդ ընդհանրացած միութիւնն է որ Կաթողիկէու-
թիւն կ'ըսուի և ո՛չ հակասութեանց լռութիւնը բարեկամական յարա-
բերութեան կեղծեօք : «Լուի» , կ'ըսէ նախնական քրիստոնէութեան մէկ
վկայութիւնը , թէ ինչպիսի են այն ֆարերն որ կուգան կազմելու շինելու (Ե-
կեղեցւոյ աշտարակը) : Այդ ֆարերն փռափռուի են ևս Եփեսոսի , որոնց ի-
րարու ազնուելու կողմերն կ'էս առ կ'էս կը համաձայնին . ասոնք առաջնա-
նէն են ևս եպիսկոպոսներ ևս վարդապետներ ևս սարկիսագներ , որ Ասու-
ծոյ արութեան մէջ ֆարած են , ևս եպիսկոպոսութիւն վարած են ուսուցա-
նելով ևս մասնակարարելով մատրութեան ևս արութեան Աստուծոյ ընտելա-

¹ Տե՛ս թիւ 63, էջ 545

ներում. ուսման անցած են, ուսման կ'ապրին տակաւին. եւ միշտ իրարու հա-
մախտն գտնուած են եւ խաղաղութիւն ունեցած են իրարու հետ, մին մի-
սին ունկնդրեցով. ասոր համար է որ աշտարակի կառուցման մէջ անոնց
ապուցման կողմերն իրարու կը կապուին» (Hermas Pastor)։ Ահա Եկեղեց-
ւոյ նախնական կազմակերպութիւնն ինչպիսի եղած և ի՞նչ կը պահանջէ
այսօր ալ. կատարեալ համախոհ միտք, համերաշխ սիրտ, անդամներու
մէջ, այնպէս որ կարենան իրարու կատարելապէս առանց ծերպ ձգելու.
(Congruentes commissuris suis) կապուիլ զօգել, շաղուիլ ի մի աշտա-
րակ միակ առանցքի շուրջը։ Հոն չի խօսուիր ազգային խորութեանց
ու զանազանութեանց վրայ, որովհետեւ Բարեկոնի աշտարակը չէ որ կը
չինուի՝ այլ Քրիստոսինը, որ եկած էր ամէն սոգ իրեն քաշելու և յինչն
միացնելու միութեամբ հաւատքի ու խորհրդոյ։ — Բայց խեղճ յառա-
ջաբանողը չի գիտեր զանազանել ծէս, արարողութիւն, լիզու և հա-
ւատք և մին զմիւսն պահելու. չափազանցօրէն հարկաւ որ կրնկատէ։
Հեթանոս Հայը օտարազգի կապաշտութեան մէկ հետեւորդն լլլալով
մէկտեղ իր ազգութիւնը պահած է. այսուրէնի գիւտը, որ ինչպստ
իւր զաւարիարին կը յիշատակէ՝ կը ցուցնէ ընդհակառակն թէ այնքան
ուշ գտնուելէն ետք՝ չգտնուէր ալ՝ Հայը իր ազգութիւնը կրնար պա-
հել։ Post hoc ergo propter hoc պարսպան է հոս ալ. Այսուրէնի
գիւտը քրիստոնէութեան շնորհքներէն մէկն եղաւ և այս լացէն բնու-
է անոնց գէմ որ գլուսաւ որիչն այսօր խաւարիչ հռչակելու. յանդգնու-
թիւնն ունին. հոյ գրականութեան, հոյ վարդապետի մեծ պայմաննե-
րէն մէկն եղաւ. այդ գիւտն՝ տարակոյս չկայ. բայց այս ալ գիտցած էր
պահել իր ազգային անկախութիւնը և գոյութիւնը. ցայսօր ալ կան
ազգեր որ իրենց ազգութիւնը պահած են մեզմէ շատ աւելի աչքառու
պայմաններով՝ չուենալով հանդերձ առանձին այրուբէն և նոյն իսկ հե-
տեւելով միեւնոյն կրօնքի և ծիսի ուրիշ հաւատակից և կրօնակից ազ-
գերու հետ։ Թէ Եկեղեցին ազգութիւնը պահեց և պիտի պահէ, մենք
ալ կ'ընդունինք. բայց թէ Եկեղեցւոյ միայն ծիսական կազմութիւնը
և ոչ հաւատքի ամրութիւնը եղած լլլայ պահպանութեան ամրոյ՝ այդ
պատմական սխալ մի է։ Եթէ ազգային գոյութիւնը անկումի սպառ-
նալեաց ստակ վտանգեցաւ, զայն պէտք չէ միայն վերագրել իր կղզի-
աջման բարձաւանդակներուն մէջ և ցուցնող ժողովուրդներու և բոնու-
ցող հրոսակներու արշաւանքին եւ գործած ուերին, այլ պէտք է ա-
նոնց ամենուն սկզբնապատճառը փնտռել նաեւ այն բարոյական կղզի-
աջման, որով հետեւելով կուրօրէն ազանդաւորներու, ինչպէս վերը
տկնարկեցինք, անհեռատես ու հաստէր կամակորներ ի մեծաւ ազգին
սնոր հաւատքի հարապատութիւնը արատաւորեցին միմեկով այսպէս
սնոր ծոցին մէջ պառակտումի եղբայրասպան սուրբ։ Հայն ինչ
որ է այսօր նոյն եղած է միշտ. անհեռատես է, գերազանցօրէն հեռու

ւող մի, և այդ հետեւողութեան մէջ գահավէժ ասոր վրայ սգիտու-
թիւնն ալ աւելցուի, դիւրին պիտի ըլլայ տեսնել թէ ինչպէս նախան-
ձորդ Ասորին և ոխերիմ Յոյնը կրցան դաւաճան գժառութեանց զիրկը
նետել զայն: Առիթն պիտի ունենանք մօտէն քննելու ազգային անկու-
մի այս մեծ պատճառն: — Գիտենք դարձեալ որ թէ Հայն քրիստոնէ-
ութեան դառնալով զարգացումի մէջ ինկաւ դէպ ի մտաւորական մշա-
կումը՝ այս ճշմարտութիւն մ'է և այդ ստուգուած է ամէն ազգաց հա-
մար. դիւանագիտական պահանջ մը եղած ըլլայ ի Բրիտանիոյ թիւն
դարձն և Եկեղեցւոյ չուրջ ամբողջութիւնը, այդ սխալ է: Ինչպէս ուրիշ
ազգաց նայնպէս հայուն դարձին մէջ դիւանագիտական հաշիւ փնտռե-
լու չէ. որքան ալ անոր հետեւանօք քաղաքական կացութիւնն փոփո-
խութիւն կրած ըլլայ և երբեմն չիմտուէ յեղաշրջուած. բայց սա հե-
տեւանք մ'է ու արդիւնք. զոր սրտմառ ու կանխամիտ ծրագիր նկա-
տելն արդի քննադատութեան իմաստակութիւններէն մէկն է: Աստու-
ծոյ գործը, երկրիս հրաշալի յեղաշրջման գերբնական գործը՝ լոկ մարդ-
կային հաշիւ չէր կրնար ըլլալ. պէտք է մանաւանդ բնել թէ ազգային
տեսակէտով երբեմն հայը տուժեց հաւատարմ ապահովելու համար. զոր
տեսիլ կը սրբէր քան նիւթական ո' և է յաջողութիւն: Եւ այս տեսա-
կէտով է անշուշտ որ չպակսեցան Հայոց մէջ գրողներ և ըսողներ թէ
Վասակը քաջ դիւանագէտ մը ըլլայ հակառակ Վարդանայ, որու աւան-
դական քաջ անունն նստմացնելու և մուսացութեան տալու յանդգնե-
ցան: — Ազգային գուտ քաղաքական վերականգնումը երբեմն զուգըն-
թաց է եկեղեցական կեանքի հետ. երբեմն բացարձակօրէն անջատ,
երբեմն հետեւանք. բայց այս չնշանակիր թէ մին միւսին կապուած ըլ-
լայ անպայման: — Յոյն ազգի օրինակը ո՞րքան անճշգորէն մէջ կը բերէ
մեր յառաջադասողը. ուրեւաններուդ դարուն մեջ, կ'ըսէ. Յոյներու
գոյութիւնը մոռցուած էր. բայց նա չունէր իր լեզուն, չունէր իր Եկե-
ղեցին, իր դաւանութիւնը. ինչպէս ուրեմն ազգային գոյութեան այս
պայմաններու ազդեցութիւնը կը մոռնայ հոս՝ զոր քիչ առաջ այնքան
ծայրայեղօրէն կարեւոր նկատած էր: Ըսելով թէ սուանց անոնց «հա-
ւանական է որ շատ մը ազգային տարրեր անկապակից հաւաքոյրներ եղած
պիտի ըլլային՝ առանց ներքին հաստատութեան եւ դիւրութեան պիտի հա-
լիկն ու ձուլուէին տիրապետող ժողովուրդներու թաղմութեան մեջ»: Կր զգայ
ուրեմն թէ ազգային գոյութիւն և կրօնական գոյութիւն իրարմէ զատ
բաներ են. և կը յայտարարէ՝ Յոյն եկեղեցւոյն գոյութիւնը չուրանա-
նալով մէկտեղ որ այն ո՞ք կը մտածէր թէ Ռուս կոչուած ռայա ժողովուր-
դը պիտի կարենայ յասուէ մարտին մը կազմել իբր անկախ ազգութիւն: Սխալ է
դարձեալ ու անտեղի թէ առաջին անգամ Յոյներու ազատու-
թիւն գտած ատեն արեւելեան միւս ազգեր յոյն անուամբ ճանչցուած
ըլլան: Արեւմտեան Եկեղեցւոյ մաքենագրութիւնը կը ցուցնէ թէ չա-

տոնց այդ չփոթութիւն մտած էր և այդ մեր յառաջաբանողի տեսութեանց աննպաստ պատճառաւ մը: Լատին և Յոյն եկեղեցի՝ ըսելն՝ Աւրեմականն ու Արեւելեան եկեղեցի կրնանակէր. և եթէ Յոյն անուան տակ կ'առնուէին հայերն ալ՝ Յոյն հերձուածի հետեւելով՝ անոր մէկ ճիւղն կ'ոգնելուն համար էր: Յոյն մինչև որ Հռովմայ եկեղեցւոյ համընթաց էր ու համամիտ դաւանութեանց մէջ, զՀայը կասկածելի ուզած է ներկայացնել Հռովմայ առջև օգտուելով հայուն մէջ մտած Յակոբիկեանց հակաքաղկեդոնեան շարժումէն. բայց երբ ուզեց ինքն ապստամբել Հռովմէն՝ գիտեալ զԼատին եկեղեցին հայուն կասկածելի ներկայացնել և Փոսի յերկարած ամբաստանութիւններն Հռովմայ եկեղեցւոյ մասին Հայուն հետեւողութեան և դիւրանաւան սփոթութեան առիթ տուին աւելի Յոյնին հետեւելու: Եթէ Հայը չարունակած ըլլար իր նախնի համազմուն մէջ մնալու թէ ինքն Հռովմէն ունի Յոյնէ անկախ նուիրապետութիւն մը. անշուշտ այն ստեղծէն «ազգային զգացումը, Արեւմտեաններու շփմանը» աւելի խոհական ու հիմնեալ արթնութեան մէջ պիտի պահուէր: Ուստի պատմականօրէն սխալ է կարծել թէ «զգացումներու նոյնութիւնն է, զոր Հայ ազգը պահած է և որով հայերը իրարու միացած են՝ հակառակ իրենց բոլոր աշխարհի մէջ ցրուած ըլլալուն»: Եթէ բարեհաւատ ըլլալու միջոցին աւանդական նոյնութիւն մը կար, այն եւս՝ բողոքականութեան ու Օրմանեանի նման նորադանդներու չնորհիւ խանգարած է. և հայը (Յառաջաբանողին նմանութիւնը պահենք) «Եփեսոսի եօթն մանկանց աւանդական ֆունիսն նման» արթնցած ատեն՝ չուարած է և չգիտեր ո՛ր դիմել, ուր երթալ և ուր գտնուիլը... Ասոնց քով եկեղեցին աստուածային հաստատութեան մը գաղափարը կորսնցուցած ըլլալով, բնական էր թէ ազգային զգացումէ կուլ տրուէր, կամ անոր հետ չփոթելով կամ անոր արգելք նկատուելով: Այս պատճառաւ է որ ոմանք ալ կրօնք ու ազգ իրարու նոյնացնելով՝ երկուքն ալ կր զոհն իրենց անառաջնորդ ուղղութեանը, ոմանք ալ կրօնքը ազգութեան խոչընդոտ մը նկատուելով՝ կ'աքացին ու կը վտարեն... զո՛հ շատ անգամ ոչ-ազգային կուսակցութեանց:

(Շարունակելի)

Վիեննական Միթարեան Միութանութեան հրատարակած «Հանդէս Ամսօրեայ» թերթին 1912ի 10րդ թիւին վերջին կողքին մէջ «Թղթակցութիւն Հանդիսի» վերնագրին տակ՝ առաջին սիւնակին վարի կողմը հետեւեալ պատասխանը տրուած կայ «Կ. Ա. Ե. Ի. «Հանդիսի» մասեցախօսականը կ'երեւայ թէ կարդացած չէ՞ նոյն «Գրական անպարտութիւն անուանելու արժանի գրքին (Օրմանեանի «Հայոց եկեղեցի» գիրքը) նկատմամբ: Սրբազան Օրմանեանի գիրքը՝ եթէ ի բաց ամենուին իբր յաւելած գրքին կցուած փճակագրական ծանօթութիւններն, աս զէ ծառայութիւն մասուցած է «Հայաստանեայց եկեղեցւոյ»: Արդէն աս լաւ կր մասնուէ «Կարողիկէ Արձագանգ»ի մէջ բազմամիտ «Խաչ» թէ Օրմանեան կրճար՝ եթէ ուզէ, ճիշդ հակառակն ալ ապացուցանել: Բաւական է այդ նախադասութիւնը մեր «գրական անպարտութիւն» վերակոչութիւնը արդարացնելու. *«Il n'y a que la vérité qui offense»* կը գոչենք հեղինակին, ի...միսի-

քառուքին: Բայց աւելի զարմանալի կէս մը կայ. այսպիսի գիւժ մը, որ նոյն իսկ շատ մը «Հայ Լուսաւորչականներու» ծիծաղը կը շարժէ՝ արժանի կը դառնայ այլիւս լեզուներու քարզմանուելու եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ իր քէ վարդապետութեան վրայ՝ եւրոպացոց ալ բնօրինակը շարժելու: Կը ցուինք պարզապէս: Մեր գրական շրջանակէն դուրս ելելով ընդդիմախօսութիւն մը գրել, աւելորդ համարած էինք, գիտնալով որ կրօնական վեճերը միշտ վնասակար եղած են, բայց քանի որ այլեւայլ լեզուներէ կը քարզուանուի, առիթ կը տրուի եւրոպայի գիտնականաց՝ իր Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետութիւն ներկայացուած անձնական հնարամտութեանց վրայ ծիծաղ շարժելու: Յայտարարեալս:

Սակնորկութիւն գրաքննական այն պնդիկ յօդուածին զոր «Հանդէսն հրատարակած էր» 1911 Յունուար, Օրմանեանի «Հայոց Եկեղեցի» գրքին վրայ, անցողակի ցոյց տալով անոր պատարակելի ինչ ինչ կէտերը:

Ինչ տրուի մեզ «Հանդէս» թղթակցութեան պատասխանագրողին վերոյիշեալ հատուածին նկատմամբ դիտել հետեւեալ կէտերը. 1. Կը տեսնուի բացայայտ թէ ամբողջ աշխարհը համաձայն է վեճելու թէ Օրմանեանի գրքը՝ անճիշդ, ճշմարտութեան հակառակ դատական ու պատմական սխալներով լի, քմահաճոյ և երկրորդական մտածումներով յերկրուած գրքը մըն է, գիտնական մարդու մը անպատուաբեր և հայ ազգին մեծապէս փնտաւար և մահաբեր, որուն ո՛չ միայն չծառայէր, այլ զայն ծիծաղելի կը դարձնէ քաղաքակիրթ աշխարհի առջեւ, զոր բացայայտ կ'ապացուցանէ «Միւնիխի նամակը» (Կոթողիկէ Արձագանք, թիւ 61, էջ 520): 2. Լորտաւելցի մէջ բարեհաճութեամբ գրող թուրքահայտ «Խաչ», մեծ ծառայութիւն է ուրեմն որ կը մատուցանէ կրօնքի, Եկեղեցւոյ և ազգիս բովանդակ, դատապարտելով Օրմանեանի այս անհեղեղ ծնունդը: Ուստի խմբագրութիւն իր ցնծագին շնորհակալութիւնները կը մատուցանէ իրեն՝ այդ ամենագութիւն հերքմանը համար: 3. Չենք կրնար ի վեր չհանել «Հանդէս» Ամսօրեայի պատասխանագրողին ևս շատ սխալ մէկ նախագատութիւնը վերոյիշեալ հատուածին մէջ, ուր կ'ըսէ. «Մեր գրական շրջանակին դուրս ելլելով (Օրմանեանի գրքին) ընդդիմախօսութիւն մը գրել աւելորդ համարած էինք, գիտնալով որ ԿՐՈՆԱԿԱՆ ՎԷՃԵՐԸ ՄԻՇՏ ՎՆԱՍԱԿԱՆ ԵՂԱՆ ԻՆՆ: Անընդունելի է այդ պարբերութիւնը, Բազմաճմուռ Կոթողիկէ Միաբանութեան մը: Միւնիխեան Միաբանութիւնը շուրջ երկու դարէ ի վեր այս կերպով միայն օգտակար ծառայութիւն մատուցած են ազգին, այլապէս նշանակութիւններ կը կրօնքին, և տարբերութիւն չմնար իրենց և աշխարհային ու կրօնքի ու և է գոյն չունեցող կաճառի մը միջեւ: Իրենց ճոխ մատենագրարանները լի են իրենց պանծալի նախորդաց այնպիսի գեղեցիկ աշխատասիրութիւններով: Աւելորդ չէ ուրեմն այդպիսի գրքերու՝ որոնք ընդհանուր ազգ մը — և աւելին — կը թունաւորեն, ընդդիմախօսութիւն գրել: Եւ բացարձակապէս սխալ է — յընդհանրի — թէ՛ կրօնական վիճերը ՄԻՇՏ վնասակար եղած ըլլան: Եթէ կ'ուզուի քննել՝ անկերթ և քննախնդիր բանակիւնները, կ'ընդունինք. բայց օրինակով վեճին՝ կրօնքի տեսակետով, ո՛չ միայն ԲՆԱԿ Գիտնական չեն, այլ հարկաւոր իսկ են, ճՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ՝ քարոզելու համար՝ մանաւանդ երբ պէտք է գոյն ՊԱՇՏՊԱՆԵԼ. և հոս գէպքը ճիշդ այս է: Աւետարան և մարդկեղէն իմացականութիւնը, կրօնքին և ազգին պատիւը դայս կը պահանջեն: Ապա թէ ոչ Եկեղեցւոյ մէջ թնչ հարկ կար շատագոյնական ճիւղի, առաջին գարեթէ մինչեւ ցայժմ. ուրեմն՝ Գանձ մը, Վոյժէն մը, Բրնան մը, ևն. կրնան խօսել, գրել և կործանել ընկերութիւնը՝ առանց ընդդիմախօսութեան: Ո՛չ այսպէս...»

—Որքով բազում առանցիկաւ, առանց իսկ սխալմանիս ի նկատին:—

ԸՄԱՆ, ԽԱՐԱ.

ՎԻՇՆՆԱՅԻ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Շար.)

ԺՈՂՈՎԻՆ ՆԻՍՏԵՐԸ

Համաժողովին աշխատութիւնները դիւրացնելու համար տասնու-
եօթը ուրոյն նիստեր որոշուած էին : Սոյն նիստերն սկսան գումարուիլ
Սեպտեմբեր 12ին :

Սկզբնական եկեղեցւոյն մէջ գումարուած նիստը զբաղեցաւ Ս.
Հաղորդութեան վերաբերած պատմական և հախօսական ճիւղերուն
վրայ :

Ճառախօսներն էին՝ Թրիպուրկի (Զուիցերիա) համալսարանի բրո-
ֆէսէօրներէն Մօնս. Յովհ. Պետր. Բիրշ, նիւթ ունենալով Ս. Հաղոր-
դութեան պաշտամունքը նախնի դարերուն. Պուքէշի Արքեպիսկոպոս
Արհի. Մօնս. Նէցհամմէր, Ս. Հաղորդութեան պահպանման պատմու-
թիւնը, և Լէոպոլտի Յոյն-Կաթողիկէ գօլէժի Տնօրէն Վեր. Տէր Յովսէփ
Պօչեան, Ս. Հաղորդութեան պաշտամունքը Լատինաց և Յունաց քով :

Ս. Օգոստինոսի եկեղեցւոյն մէջ գումարուած նիստին (որ միայն
քահանաներու վերապահուած էր) աստեղծութիւններն էին Արգիլիալ գրոց
(Index) Ժողովոյ քարտուղար Հ. Թովմաս Էսսէր, Ս. Թովմաս Ագուի-
նալոյ և Ս. Հաղորդութեան Պաշտօնին վրայ. Սէրաժէվյի Կղերանո-
յի աստուածաբանութեան ուսուցիչներէն Հայր Յովհ. Պօք. Հայր մեր
աղօթքին ա. հաստուածին վրայ. Զնաց մեր հանապազորդ տուր մեզ պատր :
Համալսարանական բրոֆէսէօր և Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ բարձրաս-
տիճան եկեղեցանկաններէն Մօնս. Կուսդավ Միլլէր խօսեցաւ թէ ինչ
հոգ ունենալ պարտին քահանայք Ս. Հաղորդութեան մասին : Սէքօի
Աքքայարանէն Աքքա Գրիգոր Հէլլէր՝ Ս. Հաղորդութեան գիշերային
երկրորդութեան վրայով :

Ամհոյ եկեղեցւոյ մէջ խօսեցան Մօնս. Գարլ Մէյէր, Պիոս Ժ. Ի
հանած առաջին Հաղորդութեան մասին հրամանագրոյն և երկրորդոր-
դութեան կրթութեան մէջ անոր ունեցած ազդեցութեան վրայով :

Վիեննայի Կալասանտեանց ընդհ. Մեծաւոր Հ. Անտոն Դուարց
խօսեցաւ թէ որքան անհրաժեշտ է Հաղորդութիւնը երկրորդականութեան
երբ տանք իրենց դպրոցական շրջանը աւարտած ըլլան :

Մակաւրպուրկի դատաւոր Հէնրի Բնօխ նիւթ ունեցաւ Ս. Պատա-
րազը իր միջոց երկրորդական կրթութեան :

Հ. Զուիթօյար Ռիթիս՝ Ակրամցի, խօսեցաւ Ս. Հաղորդութեան
ազդեցութեան վրայով նորագիր գինուորները կրօնապէս հոգ աւուն համար :

Ս. Հաղորդութեան զուգահանդէսին սահմանուած վեհակառոյց չէնքին մէջ ուսումնասիրութեանց քրիստոնէական արուեստը, և ի մասնաւորի Հաղորդութեան Խորհուրդը պատկերացնող արուեստի ճիւղերը: Այս նիւթին վրայ ճառախօսներն էին Ն. Վ. Մօնս. Պիլցեսքի, Լէոպոլտի Արքեպիսկոպոսը. Հռովմի գետնադամբաններուն մէջ գտնուած Ս. Հաղորդութիւնը ներկայացնող նկարներուն վրայ:

Դեր. Տօն Աստիանոս էկկէք Պրէսանոնցի, ճառեց թէ եկեղեցական շինութեանց սիրան է Խորանը:

Այս ատենասիրութեանց միջոցին գեղեցիկ ցուացումներով կը ներկայացուէին ճառերուն մէջ յիշատակուած Ս. Հաղորդութեան վերաբերեալ յիշատակարաններու պատկերները:

Դարձեալ կէս օրէն վերջ, Սկովտացւոյ եկեղեցւոյն մէջ աստեւախօսութիւններ եղան Ս. Հաղորդութեան վերաբերեալ երաժշտական արուեստին վրայ: Ծառախօսներն էին:

Վեր. Տօն Փրանկիսկոս Սալէրիոս Մաթիաս Սթրասպուրկցի՝ Ս. Հաղորդութեան և երաժշտութեան վրայով:

Հ. Փրանկիսկոս Վէյման՝ թէ որքան օգտակար է հոգիներուն երաժշտութիւնը Պատարագի մէջ և Հաղորդութիւն առնուելու պահուն:

Վեր. Տօն Ռիքարտոս Քրայլք Վիեննայի, աստուածային պաշտամանց պահուն կիրարկուած գործիական երաժշտութեան վրայով:

Հ. Միքայէլ Հօն, անդամ Սէքօի երաժշտախումբի ընկերութեան Վատիկանի Յանձնաժողովին, Աւստրիոյ մէջ կրօնական երաժշտութիւնը բարձրացնելու համար եղած ձեռնարկներուն վրայ:

Ս. Օգոստինոսի եկեղեցւոյն մէջ խօսեցան կէս օրէ վերջ:

Այբերտոն Մարիամ Սէյրէլ, Սալձաուրկի Համալսարանի բրօֆէսէօրներէն, Մարիանեանց, Բաղրօնադներու և Արօղջօլաթներու կրօնաւորական ներքին կենաց մէջ Ս. Հաղորդութեան ունեցած դերին վրայ:

Տնօրէն Հէնրիկոս Կիէզէ՝ Վիեննայի, խօսեցաւ Ս. Հաղորդութեան և Ընկերակցութեանց վրայով:

Թաղապետական Խորհրդական Տօքթ. Իգնատիոս Սթիլի, մասնաւորաբար նախապէս Վիեննայի մէջ խօսեցաւ Ս. Հաղորդութեան ծառայող մամուլին վրայով:

Ալֆօժ եկեղեցւոյ մէջ խօսեցան:

Հ. Ալլերը Վէյս, Ֆրիպուրկի Համալսարանի բրօֆէսէօրներէն, Սաղմոսին սա խօսքերուն շուրջ Առ Աստուծոյ որ ուրախ առնէ զմահկոթիւն իմ:

Արքեպիսկոպոս Խորհրդական Տօքթ. Ռիտն Ռիլման, Լէյթմէրիցի Համալսարանի բրօֆէսէօրներէն Ս. Հաղորդութեան վրայով՝ իբր ճանաչածիդ կէս կրթիչ բոլոր գիտութիւններուն:

Հ. Գարլ Ռուսօրֆի, Վիեննացի, ուսանողներու աստուածաբանութեան և հոգեկան ինստիտուտներու վրայով:

Մինչ այսպէս Վիեննայի Համաժողովին հետ մեր ընթերցողներն ալ կը յաջնին ջերմ հետաքրքրութեամբ մը հետեւելով անոր մանրամասն աշխատութիւններուն, իրենց լարուած ուշադրութեան պղտիկ մէկ շեղում մը տալու համար հոս նկարագրենք այն հոգեցունց տեսարանը որ կը պարզուէր Սեպտ. 13ի առաւել, ուր հազար երկսեռ մանկանց հաղորդուելու պահուն՝ առթիւ սոյն Համաժողովին:

Շուարցէնպէրկ-Թրաւթստորֆի իշխանունին քաղաքամէջը գրանուած իր ահագին չքեղ դարաստանը արամաղրելի լրած էր՝ 8000 երկսեռ մանկանց բացօթեայ հաղորդութիւն տոնելու արարողութեան համար:

Առաւել կանուխ կը հասնէին մանուկները. խստիւ արգելուած էր մեծերուն հոն մտնելը, բայց ի չորս հանդիսատեսներէ՝ ընդ որս կայսեր ղուստրը Վալէրինա արիւգրուէին: սրոնք թաւուտներու հալին ծածկուած ներկայ կը զանուէին:

Եօթը խորան կանգնած էին հոն, հինգը դղեակին ճակատի, և երկուքը՝ շատրուանին առջեւ: Փահանայապետին Պատուիրակը մէջտեղի նորանին վրայ կը պատարագէր. իսկ միւս խորաններուն վրայ՝ ուրիշ եպիսկոպոսներ:

Մանուկները քառակուսի խումբերու բաժնուած էին. մէն մի 280է բազկադած՝ քսան կարգի վրայ: Կարգերուն մէջերէն կ'անցնէին Հաղորդութիւն տուող քահանաները: Որքան ժամանակ որ տեսնէ՝ արարողութիւնը՝ պատարագիչ եպիսկոպոսները դէպ չ'դարաստան դարձած մնաղին, և այն աստի միայն շարունակեցին պատարագը՝ երբ մէնքն ալ առին իրենց հաղորդութիւնը:

Հոս հարկ չենք տեսներ մանրամասնօրէն տեղեկագրելու հանդէսին շքեղութիւնը, ամէն ոք կ'ըմբռնէ զայն, և յետոյ շատ պիտի ծանօթաբեռնէր մեր այս պատմական յիշատակարանի խմբողրութիւնը: ուստի կ'անցնինք այժմ նկարագրելու Համաժողովին երկրորդ մեծ հանդիսաւոր նիստը:

(Շարունակելի)

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՎՐԱՅՈՒ ՆԱԽԱԿ ՄԸ

Բերա, 11/24 Հոկտեմբեր 1912.

Գերշարգելի Գեորգ Ծ. Վարդապետ Թերգիսպաշտան
Տնօրեն-Խմբագրապետ «Կարողիկե Արձագանգ» Հանդիսի.

Գերշարգելի Տէր,

Քուականէս երկու օր առաջ նամակ մը ստացայ Սուրբ Գրիգոր
Լուսաւորիչ ուսումնարանէն, որուն վարը նշանակուելիք պատճառնե-
րուն համար. չկարենալով ուղղակի պատասխանել, կը ստիպուիմ զիմել
պատուական «Շարաթական» թերթիդ. ինչդեղով որպէս զի բարեհա-
ճիք նոյնին մէջ հրատարակել թէ՛ յիշեալ նամակը, և թէ՛ խոնարհ պա-
տասխանս:

Ներսէս Ծ. Վ. Աճէմեան

Ժգլեղաք. եւ մեծ. Ա. Վիճակի Բերայի

Ահաւորիկ յիշեալ նամակին ճիշդ և հաւատարիմ ընդօրինակու-
թիւնը.

COLLÈGE

ARMÉNIEN CATHOLIQUE
ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR

Constantinople, le 9/22 Octob. 1912

— + —

1 Rue Yéchi, Péra

Գերշարգելի

Տէր Ներսէս Ծ. Վ. Աճէմեան

Մեծ. Ժողովրդապետ Ս. Երրորդաթիւն Եկեղեցւոյ

Բերա

Գերշարգելի Տէր,

Ժողովրդապետութեանց սահմանին մէջ գտնուող ԱճԳ. Լ. Ուսումնա-
րանիս կրօնագիտութեան ուսուցումը ձեզ անկ բլլալով խնամակալու-
թիւնս կը խնդրեմ որ բարեհաճիք կամ անձամբ եւ կամ Ձեր կողմանէ
նշանակեալ ուրիշ բանաւայի մը միջոցաւ կատարել եւ լրացնել այդ պէս-
իք երկուսեք համաձայնութեամբ:

Այս նպատակաւ խնամակալութիւնս կը փափաքի որ յառաջիկայ
Ուրբաթ ժամը Ը. եւ 5ի միջոցներուն, եթէ կարելի է, հրամմեք Ուսում-
նարան եւ խնամակալութեան հետ խորհրդակցութեամբ որոշուին Ուսու-
ցիչը, դասաւանդութեանց ժամերը եւ այլ մանրամասնութիւնք:

Տարակոյս չկայ՝ որ խնամակալութիւնս ուսուցչին հարկ եղած վճարումը պիտի բնէ:

Հաճեցե՛ք ընդունել Գերլարգելի Տէր մեր յարգանաց հաւաստիք:

Ի դիմաց խնամակալութեան

Ս. Գ. Լ. Ուսումնարանի

ԱՏԵՆԱՊԵՏ

Զարեհ Շիժմանեան

Ուստի վերոյիշեալ նամակին պատասխանելով, պարտաւոր եմ ի խղճէ մտաց դիտել ապա նոյնին հեղինակներուն թէ, 1. թէպէտեւ ժողովրդապետներն պարտաւոր են՝ Եկեղեցական իշխանութենէ չ'որհուած իրենց պաշտօնին զօրութեամբն ուսուցանել և հրահանգել իրենց հոգեւոր խնամոց յանձնուած հաւատացեալները և մանաւանդ մանուկները Սասունոյ և Սր. Եկեղեցւոյ պատուիրաններուն և օրէնքներուն մասին, այլ զայն իրենց պաշտօնին յատկացուած Եկեղեցւոյ և առանձնականաց տուններուն մէջ կրնան ընել, և ոչ թէ այլուր և Հասարակային Ուսումնարանաց մէջ, որոնք ուղղակի Եկեղեցական իշխանութենէ կախումն ունին, և Եպիսկոպոսաց միայն անկ ե յիշեալ Ուսումնարանաց մէջ կրօնագիտութեան Ուսուցիչ անուանել և կարգել, ոչ միայն Եկեղեցական յօրինաց այլ և յԱստուածային իրաւանց. քանզի Եպիսկոպոսաց միայն ըստ է՝ «Հոգին Սր. եւ զձեզ տեսուչ» հովուել զժողովուրդ Տեառն» Ուստի Ս. Գ. Լ. Ուսումնարանին կրօնագիտութեան ուսուցումը Ս. Երրորդութեան Եկեղեցւոյ ժողովրդապետութեան ԱՆկ ըլլալուն յայտարարութիւնը յիշեալ նամակին մէջ կարգաւորվ. ապշեցայ մտացի, տեսնելով որ աշխարհիկ անձինք Եկեղեցական օրէնքները և Եպիսկոպոսաց յԱստուածային իրաւանց ունեցած անբռնարարելի իշխանութիւն և իրաւունքը ըստ քմաց կապտելով, ուրիշներու յանձնուած մեծ անդրադարձիւնը կը գործեն:

2. Յիշեալ Ս. Գ. Լ. Ուսումնարանը ոչ միայն պարզապէս Հասարակային, այլև ուղղակի Եկեղեցական իշխանութենէ հաստատուած և ինամուած ըլլալով մինչև ցայսօր, և մինչև ցայսօր միշտ Եկեղեցական իշխանութիւնն Կրօնագիտութեան Ուսուցիչը անուանած և կարգած ըլլալով, կրկնակի անդրադարձիւն է, երբ աշխարհիկ անձինք ուզենան իրենց գրաւել այդ իրաւունքը:

3. Ս. Գ. Լ. Ուսումնարանին չէնքը եկեղեցականաց դրամով և իւրեւ եկեղեցական վարժարան (Semnario) կանգնուած, և սկիզբէն մինչև ցայսօր միշտ Եկեղեցական իշխանութեան կողմանէ մրտն խնամուած և մատակարարուած ըլլալով, վերջերս յիշեալ չէնքին վրայ Ս. Քահանայապետէն բանադրուած և հերձուածող հրատարակուած աշխարհիկ անձինք ոմանք յարձակելով գրաւած են ընդդէմ և հակառակ ամենայն իրաւանց, նոյնէն դուրս նետելով եկեղեցական ուսանողաց կահը, և ասով զրկելով Կ. Պոլսոյ թեմական կղերը իրեն անբռնարարելի իրաւունքէն: Ինչպէս ուրեմն կրնայ եկեղեցական անձ մը հոն կրօնագիտութեան դաս տաւել, և աշակերտաց սորվեցնել թէ, «Ուրիշ ինչիմ մի՛ ցանկար, եւ զայն մի՛ գրաւեր»:

4. Սրբազան Քահանայապետն մեր Պիոս Ժ. դ. իւր ներկայ տար-

ւոյն Յունիս Ն. Տ. 1 թուականաւ ուղղած նամակին մէջ կը յայտարարէ թէ, Վարչական ըսուած ժողովն և անոր համախոհներն և գործակիցներն Եկեղեցական ծանր պատժոյ ներքե ինկած են. արդ որ եկեղեցական կրնայ կամ կը համարձակի իրենց յանդիմանի պրաւած Ուսումնարանը ոտք կոխել, և հոն պաշտօն ստանձնել, և ինչ պաշտօն:

5. Եւ ինչ հարկ, ինչ օգուտ կրնայ ըլլալ կրօնագիտութեան ուսուցումէն այս հանգամանաց մէջ: Եւ արդարեւ ամենամեծ հակասութիւն կը տեսնեմ գործելու այդ ձեւին մէջ: Յիշեալ նամակին մէջ կ'ըսուի թէ, «կամ անձամբ և կամ ձեր կողմանէ նշանակեալ ուրիշ քահանայի մը միջոցաւ կատարել և լրացնել այդ պէտքը երկուսեք հաւանայնութեանը» Արդ քանի որ այդ Ուսումնարանին անունն «Collège Arménien Catholique» է, անտարակոյս հաւանայնութիւնն աւանդուելիք նրթերուն մասին չպիտի լլայ. և Ուսուցիչ քահանան ազատ պիտի ըլլայ և աշակերտաց պիտի սորվեցնէ ճշիւ Կաթողիկէ վարդապետութիւնը թէ, Հռովմայ Քահանայապետներն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ փոխանորդներն են. «Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ»: Թէ «գոր կապեցես յերկրի. եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս»: Թէ յիշեալ Ծայրագոյն Քահանայապետներն, երբ յԱթոռոյ Հատարեաց և Բարոյից մասին վճիռ մը կուտան, իրենց այդ վճիռն անսխալական է, թէ եկեղեցական բարեկարգութեան մասին իրենց տուած վճիռներն, ինչպէս Արեւմտեան, նոյնպէս նաեւ Արեւելեան Եկեղեցւոյ համար հաւասարապէս կը զօրեն, և ով որ իրենց անտատէ, հերձուածող և հերետիկոս է: Արդ մինչ ուսուցիչն այս վարդապետութիւնները պիտի աւանդէ աշակերտաց դատարանի մը մէջ, ուրիշ դատարանի մէջ ալ ուրիշ ուսուցիչ մը, վարչական ըսուած ժողովէն կարգուած Խնամակալութեան հաւանութեանը, աշակերտաց պիտի սորվեցնէ թէ, Հռովմայ Քահանայապետներն ուրիշ քան չեն, եթէ ոչ սարսափելի բռնաւորներ, և թէ բռնաւոր վեհապետներն բռնաւորութիւնը իրենցմէ սորված և ժառանգած են՝ ևն, ևն, ևն, և թէ ամէն հրամայումներուն հնազանդելու պարտական չենք. ազատ ենք հնազանդելու և չհնազանդելու, երբ տրուած հրամանը անիրաւ և անհաճոյ դատենք: Ուստի աւելորդ և անօգուտ աշխատութիւն մը պիտի ըլլայ կրօնագիտութեան դասն, երբ կրօնագիտութեան ուսուցչին չինածն, ուրիշներ իրենց խօսքով և գործքով պիտի քանդեն:

Թերեւս հարցնէ մէկը թէ, ինչո՞ւ ուրեմն կրօնագիտութեան Ուսուցիչ կ'ուզուի: — Ուզողները գիտեն թէ, այդ ուսուցիչը չպիտի կարենան ունենալ. և ենթադրելով իսկ թէ ունենան, չպիտի կրնան իրեն հետ համաձայնիլ. զի միշտ իրենց խօսքը և գործը պիտի դատաւարաւ: Ուստի պարզամիտ ծնողաց աչքին փոշի նետելու համար է այդ, պատճառելով թէ, մենք աշխարհականքս կրօնագիտութեան դաս աւանդել տալ ուղեցինք, բայց քահանայք յանձն չառին:

Ուստի ցաւօք սրտի կը պարտաւորիմ յայտարարել ներկայիւս թէ, վերոյիշեալ պատճառներուն հետեւանօք իրենք չեն կրնար ուղղակի զիս հրաւիրել՝ այլ միայն դիմել առ հոգեւոր իշխանութիւն, և ես ալ՝ հետեւապէս չեմ կարող ինձի ուղղուած հրաւերն ընդունիլ:

Մնամ հաւատաւօք յարգանաց

խոնարհ ծառայ

ՆԵՐՍԷՍ Ծ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

(1) Կաթողիկէ Արձագանգ. Թիւ. 65, էջ 586:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԱՐՔԱՐԱՆ

Առաջ թիւին ժողովրդապետներուն.
Գեր. Տէր.

Լսեցիմք որ ներկայ պատերազմի հակասաճարհներուն մէջ վիրաւորեալներ ի Կ. Պոլիս փոխադրուելով այլ եւ այլ գօտնոցներու . եւ հիւանդանոցներու մէջ անխիւր կը գիտնուին: Ուստի այս խեղճերուն մտնաւանդ հոգեւոր օգնութեան փութալը ժողովրդապետաց էական պարտքերէն մին ըլլալով, ներկայիս կը հրաւիրեմք զանոնք անդամող սեղեկանալ թէ՛ ձեր վիճակին մէջ արդեօք եւ ուր գտնուած կան այնպիսի վիրաւորներ մեր հաթողիկէ Հասարակութենէն, եւ եթէ երբեք գտնուին, անմիջապէս ոչ յետիւ իրենց եւ լիովին կոտորել ձեր ժողովրդապետական պարտքը, եւ ապա նաեւ ծանուցանել Մեզ:

* Ամենապատիւ և Դերերջանիկ հոգևոր Տէրն մեր առանձին շրջաբերականում մը պատուիրած է Մայրաքաղաքիս Գեր. Ժողովրդապետաց, հանգանակութիւն կատարել իրենց եկեղեցեաց մեջ ներկայ պատերազմի առթիւ հիւանդանոցներու մէջ դարմանելու վրայ եղող ամէն ազգի վիրաւորեալ զինուորներուն համար:

* Արհ. Գրիգոր Աբբ. Գովհիկեան, Աբբ. Մխիթարեանց Վիեննայ, անցեալ շինգ-շաբթի օր Գեր. Հ. Գրիգորին Ս. Վ. Գալեօքեարեանի հետ ուղևորեցաւ ի Զմիւռնիա, յայ-ցելութիւն իրենց վանատան Ն. Արհ. տէրութիւնը կրկին պիտի վերադառնայ ի Կ. Պոլիս:

* Անկիւրիայէն լուր կը տրուի մեզ թէ տեղւոյն վիճակաւոր Արհ. Գրիգոր Նպ. Պահպանեան ծոր ընտրութիւն կատարել տուած է իր Վարչական Ժողովին, որ ամենայն յաջողութեամբ աւարտած է: Բուէից Զախմութիւն մեծամասնութեամբ ընտրուած են տեղւոյն ուղղամիտ և գործունեայ Աւագարեալքը:

~~~~~

### Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Մ Ե Ր

Բարձրագատիւ Բեամիլ բաշա, մեծ դիւանագէտը, Մեծ Եպարքոսութեան կոչուե-լաւ: Բաղարատիւն աշխարհ, հոս և դուրսը, տրտաւոյ կարգի գոհ մնաց այս անուանու-մէն, որուն կը սպասուէր ժամանակէ մ'ի վեր անձկանօք, մանաւանդ այժմեան աննախըն-թաց կնճիւղներու բերմամբ: Ցուտայի է թէ փորձառու և կորովի ծերունայն իմաստութիւնը նոր դարադարձի մը բանալ Օսմ երկրին, երջանկութեան և յառաջագիմութեան:

\* Հիւսէյին Հիլմի բաշա Վիեննայի և Բէշիւ բաշա Բարիզու գեղպան կարգուեցան:

\* Այալմիշ նահանգին մէջ զարհուրելի տրկած պատահեցաւ երկութեւրդ, 18 վա-կոններ փախչողներուն, շուրջ 300 անձի կորուստով՝ զօրականներէ որ կը փախադուէին—նայնպէս Հայտար բաշայի մօտ կամուրջի մը տակէն երբ կ'անցնէր կառախումբը, հակառակ պատուէրներու՝ վրան ելած զինուորները ջարդ ու բուրդ եղան:

\* Պատերազմը: Պաշտօններու յառաջադադարութիւնը դադարեցաւ. Օսմանեան զօր-քեր ամէն կողմ սկսան կոցութեան տէր դառնալ և յառաջանալ: Կռիւները ամենուրեք կը շարունակեն. բայց հաստատօք ձայն կը տարածուի թէ Եւր. տէրութեանց տղաւ և կտրուկ միջամտութիւն մը վերահաս է թշնամութիւնները դադարեցնելու համար, մանաւանդ Անգլիայ կողմանէ որ հիմա քան երբեք մտերմութեամբ կը սկսի վերաբերուիլ թուրք տէ-րութեան հետ՝ նոր Սատրապմ Բեամիլ բաշայի ի շնորհս:

\* Մահմուտ Մուխթար և Ազիզ բաշաները, որոնք առաջադաշտին կրայ մեծ սխալ մը գործէր էին որու հետեանօք երկու Օսմ. զինուորապետներ զիչերով զիրար զարկեր էին, Գալիս բերնելով յանձնուեցան պատերազմական ամենանին:

### Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

|                                                           |     |
|-----------------------------------------------------------|-----|
| Տէր Կոմիտաս Բ. հանայ . . . . .                            | 609 |
| Օրմոնեանի «Հայոց եկեղեցի» գիրք . . . . .                  | 613 |
| Վ. ինճեանի Ս. Հաղորդութեան Համագային Համաժողովը . . . . . | 618 |
| Ուսումնարանի վրայօք նամակ մը . . . . .                    | 621 |
| Տեղեկագրական . . . . .                                    | 624 |

ԱՐՏՕՆԱՏԻՐ  
ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԿՐԱԳԵՏ  
ԳԵՌՈԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Օսմանեան Կործակցական Ընկ. Էպուսուուռ հասեսի Թիւ 27



## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Հրատարակուեցաւ «Տարրական Սկզբունք Բրիտանական վարդապետութեան, փոքրիկ տալոց համար, հաստատելու Հոգեւոր իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ Հայ-Կաթողիկէ հաստատելութեանս ամեն դպրոցներուն մէջ»: Կցուած են առօրեայ հարկաւոր աղօթքները: Բաղկացած է 136 էջերէ:

Բովանդակութեան լուրջ, սեղմեալ եւ պարզ ոճոյն շնորհիւ դրարոցականներու ամենէն օգտակար եւ յանձնարարելի գրքոյկ մընէ անհրաժեշտ:

Դիմը անհամեմատ կերպով աժան է. ամուր թղթակազմը՝ 2 դահեկան միայն:

Դիմել՝ Կ. Պոլիս, Բերա, Պայրամ փողոց Թիւ 5:



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԿ» . Հայ Կաթողիկէ ի Պատրիարքարան պատշօնական Շաբաթաթերթը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ «եղեկութեանց բաժին» մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյց ամէն յուրերն՝ համառօտուած . որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաթերթ կարդալու :

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Թուրքիոյ համար

Տարեկան . . . . . 'Ինէկ . արծ. 40

Վեցամսեայ . . . . . » » 20

Արասահման

Տարեկան . . . . . Ֆրանկ 10

Վեցամսեայ . . . . . » 5

Քաժանոցագրութիւնք կանխիկ կը վճարուին *Մանսա-Քոստ* Եւ կամ մէյ մէկ դռնոցն նամակադրուով :

**Մէկ թիւ 1 Դանեկան**

—\*—

Նամաս . յօդուած • եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին .

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԿ

Բերա, Պայրամ փողոց Թիւ 5

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

5 Rue Baïram 5

Péra

Constantinople

ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանց կը հրատարակուի շաբաթ օրերը:

2.— Խմբագրութիւնս պատշաւորեայ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:

3.— Չեռագիրներ եւ չեն դարձուիր:

4.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տ է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:

5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կրկատարուին: